

Ա. Մուրվալյան

ՀԱՅՈՑ ԵՎ ՎՐԱՑ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Անդրկովկասյան լեզուների մեջ գիր ու դրականություն ունեցող ամենահին լեզուներից են, ինչպես հայտնի է, հայոց և վրաց լեզուները, որոնցով խոսում են այսօր հայ և վրաց ժողովուրդները:

Այդ երկու ժողովուրդների երկարատև և ամենամոտ շփումների, ներթափանցումների և խաչավորումների շնորհիվ է, անշուշտ, որ դարերի ընթացքում, նրանց կազմավորման բարդ պրոցեսում, առաջ են եկել բազմաթիվ ընդհանրություններ: Դրանք հանդիսանում են երկու լեզուների ինչպես ձևաբանական, այնպես էլ լեզվամասնագիտական ընդհանրություններ, որոնք դրսևորված են մի կողմից՝ բազմաթիվ բառերով, բառարմատներով ու մասնիկներով և մյուս կողմից՝ միևնույն ձևերով ու միջոցներով կառուցված լեզվամասնագիտական բավական մեծ քանակությամբ ներկայացնող վերապրուկներով:

Հայոց և վրաց լեզուների ընդհանրություններն այնքան շատ են, որ Ն. Մառը իր ժամանակին բազմիցս առիթ է ունեցել հայոց և վրաց լեզուները համարել ազգակից լեզուներ: Նա այս թեզը առաջ է քաշել հենց սկզբից և համառորեն պաշտպանել է մինչև իր կյանքի վերջը՝ աշխատելով իր ձեռքի տակ հզած փաստերով ապացույցել այն:

Դեռևս 90-ական թվականներին Միսրանին (Գալուստ Տեր-Մկրտչյանին) դրած նամակներից մեկում (որ պահվում է մեր Մատենադարանում)² դրում է. «...հայոց և վրաց լեզուները մի ժամանակ ազգակից են եղել: Քիչ հետո, նույն տեղում շարունակում է. «հայոց և վրաց վաղեմի ազգակցությունը մեծ հարց է, որով ես առանձին եմ մտադիր զրազվիլ»:

Այս նույն միտքը նա տարբեր ձևերով արտահայտել է իր բազմաթիվ աշխատությունների մեջ, տարբեր ժամանակներում, նույնիսկ 1932 թվին, Բաքվում կարդացած իր զեկուցման մեջ, որ հրապարակված է առանձին զրթույկով,³ Իոլոր դեպքերում էլ նա զարգացնում էր այն միտքը, որ հայերենը պատմականորեն ճիշտ կերպով չի կարելի ուսումնասիրել առանց վրացերենի ուսումնասիրության և, ընդհակառակը, վրացերենը առանց հայերենի: Նա դնում էր նաև կովկասյան մյուս լեզուների ուսումնասիրու-

¹ Կարդացված Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մառի անվան Լեզվի Ինստիտուտի գիտական սեսիայում, 1947 թ. դեկտեմբերի 30-ին:

² Տես այս մասին մեր հոդվածները՝ «Ընդհանուր լեզվամասնագիտական դրսևորումները հայոց և վրաց լեզուներում» (Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր» № 2 3, 1946) և «Խառաստեղծական ընդհանուր դրսևորումները հայոց և վրաց լեզուներում» (նույն տեղում, № 7, 1946) և այլն:

³ Այս նամակը տպված է Ն. Մառի անվան կարիքների աշխատություններում № 1, 1943, էջ 99, Երևան, Գեա. Համալսարանի հրատարակություն:

⁴ Н. Я. Марр, К бакинкой дискуссии о яфетидологии и марксизме. Баку 1932.

թյան խնդիրը, որն անհրաժեշտ էր համարում հայոց և վրաց լեզուների ոգին ճիշտ կերպով, պատմական զարգացման մեջ, ըմբռնելու համար:

Հայոց և վրաց վաղեմի այն ազգակցությունը, որ նա մեծ հարց էր համարում և որով, ինչպես ինքն էր գրում, առանձին էր մտադիր զբաղվել, իրոք որ, աչքաթող չի արել. նա այդ խնդրին նվիրել է մի հողվածաշար՝ «Հարեթական տարրերը հայոց լեզուներում» վերտառությամբ. չենք խոսում արդեն նրա այն տարրեր աշխատությունների մասին, որոնց մեջ այս կամ այն առիթով և այս կամ այն հափով նա շոշափել է հայ-վրացական լեզվահարաբերությունների խնդիրը:

Ն. Մառի առաջ քաշած՝ հայոց և վրաց լեզուների ազգակցության թե-
որ հենց սկզբից էլ ուղղակի հակադրությունն էր հնդեվրոպական «ազգակ-
ցական տեսության»: Եթե հնդեվրոպաբանությունը լեզուների ազգակցու-
թյամբ հակապատմականորեն «վերականգնում էր» ինչ որ երևակայական
«լեզվաընտանիքներ» և «նախամայր» լեզուներ, ապա Մառը, ընդհակառա-
նը, հայոց և վրաց լեզուների ազգակցության խնդիրը հենց սկզբից դնում
էր պատմական ճիշտ հողի վրա, այդ ազգակցությունը համարում էր նրանց
վաղագույն շփումների, ներթափանցումների և խաչավորումների արդյունք:
Ոչ թե քիչ լեզուներից դեպի շատ լեզուները, ինչպես «մեկնում է» հընդ-
եվրոպաբանությունը, այլ շատ լեզուներից դեպի քիչ լեզուներ (ի վերջո
հասնելով մի լեզվի): Սա է պատմական ճիշտ տեսակետը: Այս են ապա-
ցուցում փաստերը:

Եւտ բնական է, որ հնդեվրոպաբանները Ն. Մառի մեջ հենց սկզբից
էլ տեսնում էին իրենց հակառակորդին և անսահման ատելություն էին
տածում դեպի նա:

Ն. Մառի առաջ քաշած՝ հայոց և վրաց լեզուների ազգակցության թեզը
և նրա հիմնավորումը «հնդեվրոպաբանության» հիմքերի խարխուլում էր:
Այդ խնդրին նա նվիրում է, ինչպես արդեն նշեցինք, «Հարեթական տար-
րերը հայոց լեզուներում» հողվածաշարքը: Դժբախտաբար Մառը հնարավոր-
ություն չունեցավ դրել մի ամբողջական ու սպասիչ աշխատություն, մի
մենագրություն հայոց և վրաց լեզվահարաբերությունների մասին: Եւ
միայն այդ կարևոր գործի սկիզբը դրեց, պարարտ հող ստեղծեց, նրա կեն-
սագործումը թողնելով իր աշակերտներին:

Ն. Մառի աշակերտներից Հայկական ՍՍՌ ԴԱ-ի իսկական անդամ ընկ.
Ղափանցյանը մեծ աշխատանք է կատարել հայ-վրացագիտության բնագա-
վառում. նա տվել է մի շարք արժեքավոր ստուգաբանություններ՝ կապված
փոքր-ասիական մեծած լեզուների հետ (խեթերեն, խուրիտերեն, ուրար-
տերեն և այլն), որոնք նա ուսումնասիրում է հայ ժողովրդի էթնո-գենե-
զիսը պարզելու համար: Անվանի գիտնականի նյութի ընդգրկումը լայն է
ու բազմակողմանի:

Հայ-վրացագիտության բնագավառում զգալի աշխատանք են կատա-
րել նաև Ն. Մառի աշակերտներից՝ Ակակի Շանիձեն, Լևոն Մելիքսեթ-Բեկը
և այլն:

Հայկական ՍՍՌ ԴԱ-ի իսկական անդամ Հ. Աճառյանի մոտ («Ար-
մատական բառարան»-ում) ի մի են բերված հազարից ավելի հայ-վրացա-
կան ընդհանուր (փոխառյալ) բառեր և բառարմատներ, որոնցից մենք
ստույգ ենք համարում, ըստ ծագման աղբյուրի, նրա (ինչպես նաև՝ նա-

խորդ գիտնականների) համեմատած մոտ 370 ընդհանրություն, ըստ ծագման աղբյուրի, ստույգ չենք համարում նրա ինչպես նաև՝ նախորդ գիտնականների) համեմատած 430 ընդհանրություն, իսկ 170-ից էլ ավելի ընդհանրություններ թորի կամ ոչ ճիշտ են համեմատված. ֆնացածը դժվար է ընդունել. դրանք պատահական նմանություններ են: Այս բոլորին մենք ավելացնում ենք 600-ից ավելի հայ-վրացական ձևարանական ընդհանրություններ (որոնցից մի քանի տասնյակ համեմատել են նախորդ գիտնականները, մեծ մասամբ Ն. Մառը): Այսպիսով, հայ-վրացական ընդհանուր բառերից ու բառարմատներից մենք վերցրել ենք 1500-ից ավելի ընդհանրություններ:

Չենք խոսում արդեն, երկու լեզուների մասնիկների, ինչպես նաև լեզվամտածողական բազմաթիվ վերապրուկների մասին, որ առանձին աշխատության նյութ է:

Դադաքական և կուլտուր-տնտեսական կապերը դարդացման հավասար աստիճանի վրա դտնվող լեզվական կոնկրետիվների միջև միշտ էլ անխուսափելի են: Այդ կապերը, նախ և առաջ, դրսևորվում են լեզուների միջև բառերի անցումներով և յուրացումներով: Մաքուր լեզու, լեզու միայն «հո» բառապաշարով, ուրիշ լեզուների բառապաշարից անկախ, դոյություն չունի: Այդ է պատճառը, որ այս կամ այն բառը միաժամանակ գտնվում է մի քանի լեզուների մեջ:

Այսպես, օրինակ, մի խումբ բառեր միաժամանակ գտնվում են հայերենում, վրացերենում և մեռած հնագույն լեզուներից՝ խեթերենում¹ (ինչպես նաև՝ խուրիտերենում և այլն): Սա, անշուշտ, հնագույն լեզվաշերտ է, որ պահպանված է այսօր հայոց և վրաց լեզուներում:

Բերենք մի քանի օրինակ:

Հնագույն բառերից են օր՝ հյ. ալանդ-ել, որ նշանակում է «բովել, խարկել, ույրել, մրկել» և վրց. ալանդ-վա (կամ՝ լանդ-վա) «վառել, խանձել»: Սրանք էլ իրենց հերթին նույնն են՝ խեթ. aland (կամ՝ land) նույնիմաստ բառի հետ, որից կազմված է ala(n)dar-ի ձևը՝ նշանակելով սովորական «հարթ (թերևս լավաշ) հաց»:

Հյ. զորտ բառի սկզբնական արմատն է՝ զոր վերջից տ հնչյունի զարգացումով, որ սովորական երևույթ է հայերենում: Այս զոր բառարմատի ավելի նախնական ձևեր պետք է լինի *զվար, իսկ սա (զվար կամ ղվար ձևով) արդեն պահպանված է հին վրացերենում (որից և՛ նոր վրացերենում) նույն «զորտ» նշանակությամբ: Այս նախնական ձևով (զվար կամ ղվար) նույն «զորտ» բառը հնչվել է նաև խեթերենում:

¹ Բոլոր խեթերեն օրինակները բերում եմ ստորև, համապատասխան տեղերում, ըստ Հայկաթյան ՍՍԻ ԿԱ ի իսկական անդամ րնկ. Ղափանցյանի հաղորդման:

² Հ. Աճառյանը (Արմ. բառ. 7-րդ հատոր հավելված) հյ. ալանդ բառը աշխատում է «հնդեվրոպական» համարել և հանել indh ձևից: Բայց քանի որ «հնդեվրոպական» լեզվաշերտը համեմատաբար ավելի ուշ շրջանի արդյունք է, ուստի ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ բառը մեզից է անցել «հնդեվրոպական» կոչված լեզուներին:

³ Ինչպես օր վրց. կել-ի «թրիթ, աղբ» բառի դիմաց հայերենում պահպանված է կեղտ, կամ թե չէ՝ հենց նույն հայերենում ալմաթ քառից կա ալմաթ, ամեղուղ բառից՝ ամեղուխս. колбаса «երշիկ» ձևից կալբաս, крах «ծարակ» բառից՝ կռամս և այլն:

⁴ Վու>ո վոխանցումով, որ սովորական է տեղական, օր՝ քարթվիկական լեզուներում:

Հյ. անթեղ բառը, որ «կրակ» դադափարի հետ է կապված և պահպանված է այսօր «մոխրած կրակ» նշանակությամբ, նույնն է, անշուշտ, վրց. անթել-ի բառի հետ, որ նշանակում է «լույս» (նախապես «կրակ»), Սրանից է նաև վրց. անթեբա՝ «վառել, կրակ լույս վառել» (բառարմատն է՝ անթ. || անթ., որից վրց. նաթիճե ազգանունը), Այս andh կա նաև խեթթերենում (որից անցել է նաև դեպի արևմուտք՝ հուններին) և նույնն է վրց. nath կամ anih և հյ. անթ. եղ ձևերի հետ:

Հյ. ա(ն)տառ բառի հնչյունական այլ տարբերակն է վրց. հծեր-ի կամ l.(ն)ծեր-ի պոուրակ, թփուտ: Արանք նույնն են միաժամանակ խեթթ. alal «անտառ» (հմտ. հյ. տադ-ձ «անտառանյութ») ձևի հետ: Այսպես նաև՝ հյ. քմուր (որից և՛ քմրել) բառը ճիշտ կերպով համեմատության է դրված վրց. քվեր. որից և՛ քվր-ումա «հարբել» և խեթթ. taval նույնիմաստ բառարմատի հետ:՝ Նույնն են, անշուշտ, հյ. քախ-ել (որից և՛ արմատի կըրկ-նությամբ՝ օախ-օախ-ել «ամուր զարնել, խորտակել, փշրել»), վրց. քախ-եբա «ամուր զարնել, հարվածել» կամ՝ օախ-ուլ-ի = հյ. օախ-յուլ՝ ընդհանուր -ուլ = -իւլ մասնիկով) և խեթթ. zalha «կռիվ, մարտ»:

Առաջին դեմքի անձնական զերանվան հոգնակին հյ. մեմf հնում (դրաբարում) հնչվել է՝ մեբ (առանց ն հնչյունի): Սա միաժամանակ ըստ կազմության հոգնակի ձև է, հին հոգնակերտական -f մասնիկով (հմտ. դու—դու-f)՝ պարզ արմատն է *սե, որ մի ժամանակ, որպես եզակի ձև, հայերենում էլ պետք է գոյություն ունենար. նույնն է վրց. մե «ես, ինձ» և խեթթ. me «իմ» (նույնը և՛ ուրարտ. me «իմ, ինձ») համապատասխան զերանունների հետ:

Այս և նման ընդհանուր լեզվաստորերը, որ հասնում են մի քանի տասնյակի, ցույց են տալիս այն ամենամոտ շփումները, որ նախապես ունեցել են հայոց և վրաց նախահայրերը խեթթերի հետ, ինչպես նաև խուռոփտների և մյուս վաղադույն մեռած լեզուների հետ:

Երբ մենք քննության ենք առնում հայոց և վրաց լեզուները և նրանց լեզվական իրողությունները, տեսնում ենք, որ նրանց վերջնական կազմավորման ժամանակը՝ 7—6-րդ դարերը մեր էրայից առաջ՝ այնքան էլ հին չէ. մանավանդ, երբ այդ համեմատում ենք նրանց նախատիպ այն լեզուների գոյության ժամանակի հետ, որոնք անմիջապես հիմք են ծառայել նրանց կազմավորմանը:

Այդ ժամանակը ընկնում է մեր թվականությունից մոտ 1500—2000 տարի առաջ:

Հատկապես խեթթական ու խուռոփտական արձանագրությունների շնորհիվ, որ գտնված ու վերականգնված են տարբեր գիտնականների

¹ Տե՛ս՝ Գր. Ղափանցյան, Xelto-Armeniacae, 1931—33, Երևան, էջ 113—117:

² Տե՛ս՝ Գր. Ղափանցյան, Хеттские корни у армян, 1940, Երևան, էջ 17:

³ Տե՛ս՝ Գր. Ղափանցյան, Хеттские корни у армян, 1940, Երևան, էջ 21:

⁴ Ինչպես նաև «հնդեվրոպական» կոչված mes ձևի հետ Բայց իհարկե, ճիշտ չի լինի հայերեն մե-բ ձևը անմիջապես կապել և հանել «հնդեվրոպական» mes ձևից, ինչպես այդ արված է Արմ. բառարանում: Սա հետադու անցում պետք է լինի այստեղից:

⁵ Տե՛ս՝ Գր. Ղափանցյանի «Հայասան հայերի բնօրրան» մեծարժեք աշխատության մեջ, որ 1945 թվին զեկուցել է Հայկական ՍՍԽ ԳԱ-ում և այժմ մամուլի տակ է: Նեթթերի մասին բոլոր ավելները բերում ենք նրա զեկուցումից:

կողմից, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ ընկ. Ղափանցյանը վերականգնում է այն վայրերը, որտեղ մեր թվականությունից մոտ 1500—2000 տարի առաջ ապրել են հայասցիները, այսպես ասած, հայերի նախահայրերը:

Այդ վայրերը դրսևում են Վանա ծովից կամ Ուրարտուից արևմուտք, Փոքր-Հայքում:

Իրանք մեծ մասամբ իր ժամանակի, այսպես կոչված, այն քաղաքներն են, որտեղ կենտրոնացված են եղել ու նստակյաց կյանք են վարել հայասցիները: Իսկ այդ նստակյաց կյանքով զբաղվելը, որ առաջադիմական է բոլոր ժամանակների համար էլ, խիստ նպաստել է հողագործության և տարբեր կուլտուրաների մշակման գործին: Այս է պատճառը, որ նրանք հասնելով դարդացման բարձր աստիճանի, ստեղծել են նույնիսկ իրենց կյանքի օրինաչափությունների համար տարբեր օրենքներ, կանոններ և այլն: Իսկ, այս կամ այն չափով, դրսևորված է այն ժամանակվա խեթական ու խուռիտական արձանագրությունների մեջ:

Ահա այս հայասցիներն են, որ մի կողմից ամենամոտ շփման ու ներթափանցման մեջ են եղել խեթերի և խուռիտների հետ, որ հայտնի են իրենց ժամանակի բարձր կուլտուրայով՝ արձանագրություններով, և մյուս կողմից՝ քարթվեական տարբեր ցեղերի, մեծ մասամբ մոսսիսների՝ և քարթվեական ծագում ունեցող մյուս ցեղերի հետ:

Ահա այս ցեղերի՝ հայասցիների, խեթերի (ինչպես նաև խուռիտների ու մյուս վաղագույն մեռած լեզուների) և քարթվեական որոշ ցեղերի հիմնականում ամենամոտ շփումների ու ներթափանցումների հետևանքով գոյանում է հայ ժողովուրդը Փոքր Հայքում, որտեղից է՝ զորանալով՝ տարածվում է չորս կողմը՝ իր մեջ առնելով ու խաչավորելով տարբեր լեզվատարբեր: Այսպես, օր.¹ հայ ժողովուրդը գոյանալուց ու հզորանալուց հետո Փոքր-Հայքից տարածվելով դեպի արևմուտք՝ ամենամոտ շփումների ու ներթափանցումների մեջ է մտնում որոշ «նդեվրոպական» ժողովուրդների հետ և խաչալորում է իր մեջ «նդեվրոպական» որոշ լեզվաշերտ. տարածվելով

¹ Իսկ մոսսիսները այն ժամանակվա քարթվեական նստակյաց հողագործ առաջավոր ցեղերից են եղել, ինչպես հայասցիները և մյուսները, որոնց հետ շփման ու ներթափանցումների մեջ են եղել նրանք իր ժամանակին: Այդ է ապացուցում հենց թեկուզ այդ ցեղանվան ամենայն հավանականությամբ հողագործ իմաստի, որպես այդ ցեղի նախնի, հետագա զարգացումը: Բնական է, որ մոսսիս ցեղանունը, մյուս ցեղանունների նման, տարբեր հնչումներ ու արտաբերումներ է ունեցել այն ժամանակվա հարևան զանազան ցեղերի մոտ: Բացի մոսսիս հնչումից, նա հնչվել է նաև մոսիս, մեոիս (նույնը և վրացիների մոտ՝ մեսիս-ի): մեոիս կամ մուեկ (բլ-→կ սովորական դիֆթինգիայով, որ շատ ուժեղ է տեղական լեզուներում) այոտեղից էլ մուեակ=մրց. մուեակ-ի (հետագայում՝ մուշալ)=հ. մուսկ նախապես «հողագործ» նշանակությամբ: Սա ցույց է տալիս, որ քարթվեական ցեղերից (որ շփման մեջ են եղել հայասցիների հետ), օր.² մոսսիսները նստակյաց կյանք են վարել և զբաղվել են հողագործությամբ. իր ժամանակի առաջավոր կուլտուրայով օր, անշուշտ, նրանց գլխավոր հատկանիշն է եղել:

² Այդ արձանագրությունների մեջ եղած խեթերեն որոշ լեզվաառերեր անմիջապես կապվում են քարթվեական լեզուների հետ, ինչպես օր. -va մասնիկը խեթ. նախադասության կամ խոսքի վերջում գրվելիս ցույց է առնում, որ դրանք (այսինքն՝ նախադասության կամ խոսք) սերից է կրկնվում: Այդ նույն առումով գործ է ածվում նաև վրց. օ մասնիկը, որ անշուշտ, նույնն է խեթ. -va մասնիկի հետ (-va>-օ սովորական փոխանցումով):

դեպի հարավ-արևելք և շփվելով ու հարակցելով ուրարտացիների հետ՝ խաչավորում է իր մեջ ուրարտական (ավելի հետազոտում արդեն՝ իրանյան) լեզվատարեր, տարածվելով դեպի հյուսիս-արևելք և կրկին շփվելով ու հարակցելով քարթվելական և կովկասյան այլ ժողովուրդների հետ՝ դարձյալ խաչավորում է իր մեջ քարթվելական (կովկասյան) նոր լեզվատարեր:

Այսպիսով, հայերենը, ինչպես նաև՝ վրացերենը, որը խաչավորել ու ամփոփել է իր մեջ տարրեր լեզվատարեր, ըստինքյան, բարդ է իր կառուցվածքով: Նրա մեջ վերապրում են տարբեր լեզվաշերտեր, որպես կազմալորիչ տարրեր, որոնց մեջ ամենահինը, ինչպես ն. Մաոն է ասում, նախա-արիական (այսպես ասած՝ փոքր-հայքյան, այն է՝ խեթական, խուռիտական, հայասական, քարթվելական) լեզվաշերտն է:

Հայոց և վրաց լեզուները՝ զոյանալով վաղագույն շրջաններում խեթերի, խուռիտների, հայասցիների և քարթվելական որոշ ցեղերի ու տոհմերի բնական ներթափանցումների պրոցեսում՝ այսօր իրենց ծաղկման շրջանն են ապրում:

Այդ է պատճառը, որ նրանք իլլինց մեջ ամփոփում են այնպիսի ընդհանրությունները, որոնք, իրոք, ինչպես վերևում մի քանի օրինակներով տեսանք, դալիս են վաղագույն ժամանակներից: Այս կարգի ընդհանրությունները կարելի է մասամբ վավերացնել դերադանցապես խեթական, խուռիտական և այլ վաղագույն մեռած լեզուների արձանագրություններով, որքան որ դրանք կարող էին արտացոլել ու մեզ հասցնել այդ ընդհանրությունները:

Հայ. վրացական հնագույն բոլոր լեզվաընդհանրությունները, սակայն, հնարավոր չէ վավերացնել խեթական արձանագրություններով, քանի որ, բնականաբար, այդ արձանագրություններից միայն փշրանքներն են մեզ հասել, մյուս կողմից, պարզ է, որ ամեն ինչ չէր կարող նույնիսկ իր ժամանակին դրսևորվել այդ արձանագրություններում:

Օր.¹ տիկ բառը, մեր կարծիքով, հնագույն բառերից է և պահպանված է ինչպես հայոց, այնպես էլ վրաց ու մյուս կովկասյան լեզուներում:

Հարավային կովկասյան (քարթվելական) լեզուներում տիկ (որից և՛ քիկ կամ ցիկ) կամ սղված՝ տկ ընդհանուր բառարմատից տարբեր մասնիկներով կազմված են, օր.² ճան, տիկ-ան-ի-վրց. քիկ-ան-ի կամ ցիկ-ան-ի «այծիկ, ուլ» նշանակությամբ (ինչպես նաև՝ քուր-ցիկ-ի «այծյամ», վա-ցիկ-ի կամ վա ցի «որձ այծ»), նմանապես՝ բա-տկ-ան-ի «գառը» կամ բա-տկ ի «մատղաշ այծ, ուլ». կա նաև մեզր. բա տիկ-ի կամ հա տիկ-ա (բա-տիկ ան-ի ձևից), որից է՝ բա-տի-ա «մի տարեկան էղ այծ» և այլն: Այնուհետև այս նույն տիկ բառարմատը տեկ կամ տիգ ձևով տարածված է նաև հյուսիսային կովկասյան լեզուներում, օր.³ չերքեզերենում, չաչներենում, քիստերենում, ծովերենում և այլն:

Այս բոլոր բառաձևերը թե՛ հարավային և թե՛ հյուսիսային կովկասյան լեզուներում արտահայտում են ընդհանրապես կենդանու՝ այծի, ուլի, ոչխարի, գառան և այլ չորքոտանիների գաղափարը:

¹ Նմանապես «հնդեվրոպական» լրջված լեզուներում, որոնք այստեղից են ստացել անշուշտ:

Հյ. տիկ կամ սղված՝ տլ (օր՝ տկ-նար ձևի մեջ) բառարձատն էլ, ինչպես կովկասյան լեզուների համարժեքներից է երևում, սկզբում, բնականաբար, պետք է արտահայտեր նախ ընդհանրապես կենդանու դադափարը և ապա կենդանուց հանած այդ նույն կենդանու մորթու դադափարը (որի համար հմմտ. ուես. КОЗА «այծ» և КОЖА «մորթի»):

Որ տիկ բառը հայերենում ընդհանրապես կենդանու մորթու դադափար է ստացել. դա պարզ երևում է, մեր կարծիքով, դեռ այսօր էլ պահպանված հայոց մի շարք դարձվածքներից՝ «Տկերով կաբագ ու պանիր», «Եղն ու մեղրը շան տկի մեջ» և այլն: Պարզ է, որ տիկ բառն այստեղ միայն այժմի մորթու դադափար չի արտահայտում, այլ ընդհանրապես կենդանու մորթու:

Ինչպես տիկ բառը հայերենում ընդհանրապես կենդանու մորթի է նշանակում, այնպես էլ նրա համարժեքները կովկասյան լեզուներում հենդ ուղղակի կենդանի են նշանակում ընդհանրապես: Սկզբնականն անշուշտ մի բառաձևի ցույց տված իմաստի ընդհանուր առումն է, այսինքն՝ տարբեր առումները (օր՝ տիկ բառարձատը ոչ միայն նշանակել է «այծ», այլ ընդհանրապես կենդանի՝ այծ, ուլ, ոչխար, դառն և այլն): Իմաստի այս բազմազանությունն հետ միասին կովկասյան լեզուները տիկ կամ ցիլ բառարձատի հետ միացած պահել են նաև բա- (օր՝ բա-տիկ-ի ձևի մեջ) և վա- (օր՝ վա-ցիկ-ի ձևի մեջ) նախամասնիկները, որոնք երբեմնի քերականական սեռի կամ դասի ցուցանիշներն են:¹

Այս բոլորից հետո նույնիսկ անկարելի է մտածել, որ հյ. տիկ բառը «հնդերոպական» լինի (եվրոպայից բերած), ինչպես այդ նշված է Արմ. բառարանում:

Այսպես նաև՝ հյ. գավառ բառը, որ նշանակում է «երկրամաս», ճիշտ չի լինի վրացերենից փոխառյալ համարել, ինչպես այդ արված է նույն Արմ. բառարանում: Թեև հյ. գավառ բառի վրց. համարժեքը՝ գվար **ձևը** իր «ցեղ, ազգ, տեսակ, տոհմ, տուն, ընտանիք» նշանակություններով սկզբնական է, որ ցույց է տալիս էթնոս, իսկ հայերենինը երկրորդական՝ ցույց տալով այդ էթնոսի ապրելու տեղը (սկզբնական ցեղանունից տեղանվան անցումը կատարած լինելով, որ սովորական երևույթ է լեզուների մեջ, ինչպես, օր՝ հյ. հայ-ք ձևը նախ նշանակել է «հայեր», որպես էթնոս, և ապա՝ «Հայաստան», որպես նրանց բնակվելու տեղը և այլն)², բայց սա դեռևս չի նշանակում, թե գավառ բառը վրացերենից է փոխառյալ: Սրանք հնագույն ընդհանրություններ են (մանավանդ որ gavar || gvar բառը գտնվել է նաև խեթերենում sar-gavra «բարձր տեղ» բառաձևի մեջ):

Հյ. եզ «մեկ» բառի արձատն է գ կամ գա, որ կովկասյան մի շարք լեզուներում նշանակում է «1» (հմմտ. վրց. ցալ-ի «հատու, մեկ հա»)։ Իայց թե հյ. եզ բառը կովկասյան լեզուներից է փոխառյալ, ինչպես կարծում

¹ Ինչպես պարզում է ահա. Իվ. Ջավախիշվիլին իր «Բարթեղական և կովկասյան լեզուների ամենասկզբնական բնույթն ու ազգակցությունը» ստվարածավալ ու մեծարժեք աշխատության մեջ:

² Ցեղանունից տեղանվան անցումը, իմ կարծիքով, կատարել է նաև նույն գվար բառը վրացերենում, այսպես՝ գվար > գուր (սա > ո սովորական հնչյունափոխությամբ), որից է՝ վրց. Գուր տեղանունը (քաղաքը):

է Հ. Աճառյանը՝ «Արմ. բառարանում», դժվար է ասել. որովհետև արանք դարձյալ ընդհանրություններ են:

Հյ. ծարավ ջրի կարոտ, անջուր բառի արմատն է, անշուշտ, ծար (ւալ մասնիկով, որով, օր՝, տեղանունները՝ Թեղ-ավ, Կճ-ավ, Որգն-ավ... և այլն)՝ սա կապված է ջրի» գաղափարի հետ: Այս նույն ծար- բառարմատը պահպանված է քարթվելական լեզուներում (օր.՝ ճաներենում) ուղղակի ջուր» նշանակությամբ (հմտ. վրց. ծար-զուլա ջրհեղեղ)՝ Սա ևս ընդհանուր է երկու լեզվի համար:

Հյ. կին կամ կինք բառը նշանակում է «ոտի տակը, հետք» և նույնն է մեզր. կին-ի «հետք» ու քարթվելական մյուս համապատասխան ձևերի հետ: Այսպես նաև ընդհանուր են՝ հյ. ձիւր բոլորտիքը, շրջան» և վրց. ծր-ե շըր-ջան», հյ. ծիրան-ի «գեղեցիկ կարմիր» և սվան. ծըրան-ի «կարմիր», հյ. սուր-ալ «վազել, գնալ» և վրց. սուլ-ա «գնալ»... և այլն, և այլն¹:

Արանք սովորական ընդհանրություններ են, որոնք դալիս են հնագույն շրջաններից: Արանք թիվը հասնում է հարյուրների: Այսպիսի բառեր նախնապես հարազատ են ստուգաբանվող լեզվին, որքան մյուս, նրան ազդակից, լեզվի համար. սակայն այն տարբերությամբ, որ առաջինը ընդհանրությունների իմաստային ավելի հին վերապրուկներ է պահպանել իր մեջ: Այլ կերպ ասած՝ արանք այնպիսի ընդհանրություններ են, որոնք դալիս են, ինչպես Ն. Մառն էր ասում, նախա-արիական (հաբեթական) լեզուներից: Այդ լեզուներն են. անշուշտ, հայոց և վրաց լեզուների այդ ընդհանուր բառերի, այսպես ասած, հիմնական ազբյուրը, մի ազբյուր, որ գոյացել է նախորդ բազմաթիվ լեզուներից, և այսօր այլևս չկա, բայց որը դեռ այսօր էլ, այս կամ այն չափով, վերապրում է հայոց և վրաց լեզուներում: Այսպիսով՝ այդ ազբյուրը ոչ զուտ հայկական է և ոչ էլ զուտ վրացական, այլ ընդհանուր է երկուսի համար էլ:

Նման ընդհանուր բառեր, ինչպես մենք վերևում տեսանք, գտնվում են հայերենում և վրացերենում, երբեմն էլ միաժամանակ խեթերենում, թուրիսերենում և մյուս վաղագույն մեռած լեզուներում. դա ցույց է տալիս, որ այդ կարգի ընդհանրությունները ստեղծվել են վաղագույն շրջաններում՝ այդ լեզուների ամենամոտ շփումների, ներթափանցումների ու խաչավորումների ուղիով: Այդ կարգի ընդհանրությունները մեկ կամ մյուս լեզվին վերադրելը կամ «Հնդեվրոպայից» բերելը, կամ մեկ կամ մյուս լեզվի «սեփականությունը» դարձնելը, բնականաբար, ճիշտ չէ, քանի որ այն ժամանակ հայոց և վրաց լեզուները դեռևս ներթափանցումների ու խաչավորումների պրոցեսում էին գտնվում և ձևավորված չէին:

Սա հայոց և վրաց լեզուների առաջին, կազմավորման շրջանն է, երբ ձևավորվել են կամ գոյացել բազմաթիվ ընդհանրություններ, որոնք վաղագույն լեզուներում բոլորովին էլ փոխառության տիրույթում չեն և չեն էլ կարող լինել և որոնք կազմում են ամբողջ լեզվապաշարի մի զգալի ու գերակշռող մասը, մի ամբողջ լեզվաշերտ:

«Փոխառությունների» կամ, ավելի ճիշտ, փոխանցումների խնդիրը

¹ Այս և մի շարք այլ-վրացական բառային գույադիպումների մասին ավելի մանրամասն տես իմ հոդվածը «Հայ-վրացական բառային գույադիպումներ» վերնագրով (Գեա. Համալսարանի Ն. Մասի անվան կարիքների աշխատություններ, № 3, 1937):

այս կամ այն լեզվի մեջ կարելի է գնել միայն այն ժամանակվանից, երբ արդեն զործ ունենալ որոշակի ձևավորված լեզուների եետ։ Նման դեպքերում էլ այս կամ այն բառը (եթե դա հին է) մեկ կամ մյուս լեզվին վերադրելը և նրա «սեփականությունը» համարելը հաճախ դարձյալ պայմանական է։ Այսպես թե այնպես, հայոց և վրաց լեզուները շնորհիվ քաղաքական և կուլտուր-տնտեսական (անմիջական թե միջնորդական) չփոխների՝ իրենց բառերի մի զգալի մասը այնուամենայնիվ յուրացրել են իրանյան, սեմական, հելլենական և այլ լեզուներից և հարստացրել իրենց բառապաշարը։ Հայոց և վրաց լեզուների նման ընդհանրությունները, որ առաջ են եկել տարբեր ժամանակահատվածներում ու շրջաններում՝ աարեր լեզվաշերտերից ու լեզուներից, համեմատաբար ավելի նոր են և մեծ մասամբ հայտնի՝ ծագման տեսակետից։ Բայց սովորաբար հայոց և վրաց լեզուների կազմավորումից հետո տարբեր ժամանակահատվածներում՝ յուրացված ընդհանուր բառերն ու բառարմատներն են, որոնք հաճախ պահպանված են յուրահատուկ ձևերով։

Սա արդեն հայոց և վրաց լեզուների երկրորդ, այսպես առած, կազմավորմանը՝ հաջորդող շրջանն է, երբ մեզ հեաաբրբաղ լեզուները, որպես արդեն կազմավորված լեզուներ, շփման ու կուլտուր-տնտեսական (ինչպես նաև՝ քաղաքական) հարաբերությունների մեջ են եղել մյուս հարևան (նմանապես արդեն կազմավորված) լեզուների հետ, որոնց տվել են կամ որոնցից յուրացրել են մի շարք բառեր ու բառաձևեր, որոնք ինչ-որ մեխանիստակաճ փոխանցման արդյունք չեն և չեն էլ կարող լինել։

Բառերի յուրացումը միշտ էլ հնարավոր է՝ ինչպես հին, այնպես էլ մանավանդ նոր ժամանակներում։

Նոր յուրացրած բառերից է, օր՝ կապիտալ—վրց. կապիտալ-ի՝ երկուսն էլ «դրամազուխ» նշանակությամբ. մենք այդ յուրացրել ենք ռուսերենի միջոցով, սակայն ծագումով, ինչպես ընդունված է, լատ. capital «զուխ» բառն է։

Կապիտալ բառի հետ յուրացված է մեզ մոտ նաև կապիտալ-իստ=վրց. կապիտալ-իստ-ի՝ երկուսն էլ դարձյալ ռուսերենի միջոցով։ Այսպես նաև՝ կոմունա և կոմուն-իստ=վրց. կոմուն-իստ-ի, տանկ և տանկ-իստ=վրց. տանկ-իստ-ի և այլն՝ բոլորն էլ դարձյալ ռուսերենի միջոցով։

Այստեղ՝ կապիտալ-իստ, կոմուն-իստ, տանկ-իստ և այլն՝ կապիտալ, կոմունա, տանկ բառերի հետ միասին նաև անբաժանելիորեն -իստ մասնիկն է յուրացված։ Այդ է պատճառը, որ -իստ մասնիկը մեզանում բառատեղծական մասնիկ չէ. մենք դրանով նոր բառեր չենք կազմում։¹

Օր՝ տանկ բառը յուրացնելով (որի հետ և՛ տանկիստ ածանցավոր ձևը) մենք դրանից մեր մասնիկներով կազմել ու կազմում ենք զտնազան ձևեր, ինչպես՝ տանկ-այլի, տանկ-ավոր, ան-տանկ, տանկ-ավար, կամ թե չէ՝ ածանցավոր ձևերից, ենթադրենք, տանկիստ-այլի, տանկիստ-ական... և այլն։ Այսպիսով, ուրեմն, այս կամ այն բառը կամ երբեմն էլ նրա տարբեր ածանցավոր ձևը յուրացնելով մենք նրանից կազմում ենք մեզ անհրաժեշտ տարբեր ածանցավոր ձևեր՝ մեր «սեփական» մասնիկներով։

Սովորաբար կարող են բառեր (երբեմն նույնիսկ ածանցավոր բառա-

¹ Թեև ունենք՝ լուսո բառից՝ բառ-իստ, կապիտալ բառից՝ կապիտալ-իստ և այլն։

ձևեր) յուրացվել կամ, ինչպես ընդունված է ասել, փոխառնվել գրեթե բոլոր ժամանակներում էլ, երբ լեզուներն արդեն կազմավորված են: Բայց մասնիկների կամ ածանցների յուրացումը կամ փոխառությունը՝ առանց բաարմանի՝ մեծ մասամբ անկարելի է կազմավորված լեզուների դեպքում¹:

Մասնիկների կամ ածանցների յուրացումը նախատեսում է մեծ մասամբ լեզուների ուժեղ շփումներն ու խաչավորումները, նույնիսկ նրանց խռնումը: Իսկ դա սովորաբար թեղի է ունենում այն ժամանակ, երբ խաչավորման ենթակա լեզուները դեռևս կազմավորված չեն:

Այս առկառից էլ հայոց և վրաց լեզուները վաղագույն շրջաններում, երբ դեռևս կազմավորման պրոցեսում էին, ենթակա են եղել ամենաուժեղ շփումների և խաչավորումների: Այդ ևն ապացուցում նմանապես հայոց և վրաց լեզուների մի քանի ժամանակի հասնող ընդհանուր մասնիկները կամ ածանցները:

Հայոց և վրաց լեզուների ընդհանուր մասնիկների համեմատությունից պարզվում է, որ, նախ և առաջ, նրանց հիմնական մասը նախապես կազմված է եղել, մեծ մասամբ, անունների հավաքական կամ հոգնակի զաղափարի հետ: Հետագայում այդ մասնիկները սաացել են իմաստային տարբեր երանգավորումներ, որոնց հետ միասին նաև ձևական որոշ փոփոխություններ են կրել՝ ըստ տարբեր լեզուների հնչյունական օրինաչափություն:

Այս պրոցեսում է ահա, որ անունների հոգնակի մասնիկները երկու լեզվում էլ անուններից անցել են բայերին՝ վերջիններիս ձևավորման պրոցեսում՝ տալով նրանց՝ իմաստի տարբեր երանգներ:

Անուններից անցնող այդ հոգնակի մասնիկները բայաձևերի մեջ էլ, նախ և առաջ, կապվում են անմիջականորեն օբեկտի և սուբեկտի, որպես առարկաների կամ անունների, հոգնակիության հետ, այնուհետև բայի ցույց տված գործողության կրկնության կամ բազմապատկության հետ (որ ցույց է տրված մեծ մասամբ մի օբեկտի կամ միանման օբեկտների շատ մասերում), ապա՝ գործողության տևականության կամ ինտենսիվության հետ և այլն:

Բերենք մի քանի օրինակ:

Հարեթական մասնիկների մի համախումբը, որ խաչավորված ու պահպանված է հայոց և վրաց լեզուներում, հետևյալն է՝ հյ. -աւս, -աս, -տ և վրց. -աղ, -աղ, -ղ: Հայերենում այդ մասնիկները հանդես են գալիս նաև վերջից -ի մասնիկի բաղադրումով. այսպես՝ -ատի, -ասի, -տի: Սրանք մի ժամանակ հայերենի անուններում, ինչպես հայտնի է, արտահայտել են և դեռ այսօր էլ, որոշ բարբառներում, արտահայտում են հոգնակի կամ հավաքական զաղափար. այսպես, օր.՝ «մանուկ» բառի հոգնակին է եղել թի մանկի-աւն-ի և թի մանկի-տի «մանուկներ»։ «ծակ» բառից՝ թի ծակ-ի և թի ծակ-աւտի «ծակեր», «ոսկր» բառից՝ թի ոսկր-ի և թի ոսկր-աւտի «ոսկրներ»... -ատի մասնիկով հոգնակի ձևեր պահպանված են մեծ մասամբ Ազոուիսի

¹ Թեև որոշ օրինակներ կարելի է գտնել ու բերել նույնիսկ կազմավորված լեզուներից, ինչպես, օր.՝ ուռ. ԿՁԻ «թեյ» բառից՝ ուռ. մասնիկով ուռ. ԿՁԻ-ՈՒՌ «թեյաման», որի նմանությունը նաև՝ հայերեն քվ-նիկ «թեյաման»... և այլն:

բարբառում, օր. պրոպ-տտի-ֆ նշանակում է «պառաֆներ», գըգըր-տտի-ֆ՝ «գաղարներ»... և այլն:

Այս հոգնակի մասնիկները անուններից անցել են բայերին՝ վերջիններիս ձևավորման ժամանակ. այսպես՝ ծաղի նշանակում է «մի ծակ», ծաղի-տի՝ «շատ ծակեր», սրից և՛ ծաղի-տ-ել բայաձևը «շատ ծակեր բանալ» նշանակությամբ. պատառ նշանակում է «մի պատառ». պատառ-տտի՝ «շատ պատառներ» և այստեղից էլ պատառ-տտ-ել՝ «շատ պատառներ անել» կամ, ինչպես կասեն, «պատառ-պատառ անել»։ փշուր նշանակում է «մի փշուր»։ փշր-տտի՝ «շատ փշուրներ» և այստեղից էլ՝ փշր-տտ-ել՝ «շատ փշուրներ անել» կամ, ինչպես կասեն, «փշուր-փշուր անել»... այս ձևով նաև՝ ինձ-ել, օր. «մի արտ ինձել», բայց՝ եմձ-տտ-ել «բոլոր արտերը ինձել»։ մարթ-ել, օր. «մի ոչխար մորթել», բայց, մարթ-տտ-ել «բոլոր ոչխարները մորթել»։ ճառ-ել, օր. «մեկը նստել», բայց՝ ճառ-տտ-ել «բոլորը նստել»... և այլն:

Այսպիսով, ինչպես ասենում ենք, -տա, -տտ- տ մասնիկները գալով անունների համապատասխան հոգնակի մասնիկներից՝ բայաձևերի մեջ էլ շարունակում են արտահայտել նույն «շատ» գաղափարը. այս դեպքում արդեն, այսպես ասած, գործողության «շատ» գաղափարը, որ գրականությունում է հաճախ գործողության կրկնությամբ ու անականությանմբ, իմաստի այս վերջին առումով հանգես են գալիս քարթվելական լեզուների բայաձևերում հյ. -տտ և -տ մասնիկների ձևա-իմաստային համարժեքները՝ վրց. -տ և -դ մասնիկներ, որոնք սովորաբար բայաձևերի մեջ էլ ցույց են տալիս գործողության տևականությունը, ինչպես նաև՝ կրկնությունը: Այսպես, օր.՝ վրց. միդի-ս «գնում է» բայից՝ -ուդ մասնիկով՝ միդի-ուդ-ա ձևը նշանակում է «գնում էր» կամ «ամեն անգամ գնում էր»։ այստեղ գործողությունը սկսված է ու շարունակվում է և չեղանակապես տևական է: Այսպես նաև՝ ֆրեբ-ա «հանգչում է» բայից՝ ֆրեբ-ուդ-ա նշանակում է «հանգչում էր» կամ «ամեն անգամ հանգչում էր»։ ձեր-ս «գրում է» բայից՝ ձեր-դ-ա նշանակում է «գրում էր» կամ «ամեն անգամ գրում էր»... և այլն:

Ընդհանուր են նմանապես -աւն (կամ՝ -եւն) և -ն մասնիկները, որոնք երկու լեզվի երբեմնի հոգնակի կամ հավաքական մասնիկներից են, ինչպես, օր.՝ հյ. ձի-աւն—վրց. ցիւեւ-ն-ի «ձիեր», հյ. իւ-եւն—վրց. վիւր-ն-ի «էջեր», հյ. իծ-աւն—վրց. բիւե-ն-ի «այծեր» և այլն: Այս նույն հոգնակի մասնիկները անուններից անցել են բայերին՝ իմաստի տարբեր երանգավորումներով. օր.՝ վրց. գաւնր-ա բայը նշանակում է «մի բան կտրեց», իսկ գաւնր-ն-ա՝ «շատ բան կտրեց»։ վրց. գաշաւ-ա նշանակում է «մի բան փռեց», իսկ գաշաւ-ն-ա՝ «շատ բան փռեց»... և այլն:

Այս նույն մասնիկը -աւն կամ -ն՝ գրականությունում է նաև հայերենի բառաձևերում՝ «շատ» գաղափարից տևականության կամ մի վիճակից մյուսին անցնելու գաղափարը գրականությունում. այսպես, օր.՝ «ձի» բառի երբեմնի հոգնակին է «ձի-աւն», որից և, ենթադրենք, ձի-աւն-ալ («ձիուց ձի դառնալու վիճակը ցույց տալով»)։ «էջ» բառի հոգնակին է՝ «իւ-աւն», որից և՛ իւ-աւն-ալ և այլն. սրա նմանությամբ նաև՝ քար-աւն-ալ, մեծ-աւն-ալ, լի-աւն-ալ... և այլն:

Այս -աւն կամ -ն մասնիկները հանգես են գալիս նաև վրց. մի շարք բայաձևերի վերջից և արահայտում են հոգնակի գաղափար (երբորդ դեմքում). այսպես, օր.՝ վրց. քիւ-ս նշանակում է «տաշում է», իսկ քիւ-աւն՝

«առաջում են»։ Վրց. ամբեր-ս նշանակում է «վառում է», իսկ ամբեր-եմ⁶ «վառում են»... և այլն⁷։

Անուններից բայերին են անցել նաև ընդհանուր -օր կամ -ար ե -ր երբեմնի հոգնակի մասնիկները, -օր հոգնակի մասնիկը անունների մեջ առանձին հանգես չի գալիս, այլ սովորաբար բարգվում է այլ մասնիկներին։ Օր.⁸ «արա» բառի հոգնակին կամ հավաքականը մի ժամանակ Խրտ-օր-ալ էր՝ «արտեր» նշանակությամբ. այսպես նաև՝ «վան» բառից՝ վան-օր-ալ «վանքեր», «դաշտ» բառից՝ դաշտ-օր-ալ «դաշտեր»... սրանց վերջից կարող է նորից -ք հոգնակի մասնիկն ավելանալ, ինչպես՝ արտ-օր-ալ-ք⁹ նորից «արտեր» նշանակությամբ, վան-օր-ալ-ք «վանքեր»... և այլն։

Այստեղ, օր.¹⁰ արտ-օր-ալ-ք բառաձևը իրար բարդված երեք հոգնակի մասնիկ ունի, որոնցից առաջինը «-օր» է (որ անունների մեջ առանձին չի գործածվում), վերջին երկուսը միացյալ -ալք ձևով պատահում է հոգնակի որոշ բառաձևերում, ինչպես՝ «կին» բառից՝ կան-ալք, «տիկին» բառից՝ տիկն-ալք «տիկիններ», «իշխան» բառից՝ իշխան-ալք «իշխաններ»...

Ուրեմն, կարելի է հաստատ ենթադրել, որ -օր մասնիկն էլ առանձին պետք է գործածվելիս լիներ նաև հոգնակի անունների մեջ, քանի որ մենք նրան հանդիպում ենք մի շարք բայերի մեջ և առանձին գործածված։ Այսպես, օր.¹¹ «կապել» բայից ունենք կապ-կա-ել և կապկա-ոտ-ել, բայց նաև՝ սրան զուգակից՝ կապկա-որ-ել (-օր մասնիկով)¹²՝ «շատ կապել» նշանակությամբ, ինչպես նաև՝ խազ-մզ-ել, խազմզ-ոտ-ել և խազմզ-որ-ել «շատ խազմզել»։ քշտ-ել, քշտ-ոտ-ել և քշտ-օր-ել «շատ քշտիկներ դուրս տալ»... և այլն։

Այս -օր մասնիկի համադրոն է՝ -ալք մասնիկը, որ գրաբարում դրսե-վորվել է -եալք ձևով, ինչպես՝ րշ-եալք «էշեր», րան-եալք «բաներ», խոսքեր», վալք-եալք «վանքեր, վանականներ»... և այլն։ Այս երկբարբառ մասնիկի ժողովրդական պարզացումից հնարավոր է ստանալ -եր, -ար և -իր՝ ըստ տարբեր բարբառների արտաբերման, օր.¹³ գրաբար րան-եալք հոգնակին մի բարբառում (ինչպես նաև նոր գրական հայերենում) գործ է ածվում քան-եր ձևով, մի այլ բարբառում՝ րան-ալք ձևով (օր. Այուլիսի բարբառում՝ հմմտ. ասն-ար «աներ», շոն-ար «շներ», հաց-ար «հացեր»...), մի երրորդ բարբառում էլ՝ րան-իր ձևով։ Այս վերջին ձևից էլ, մեր կարծիքով, անուններից անցել է որոշ բայերի մեջ -ր ձևով. այսպես, օր.¹⁴ ունենք ղմտ-ել և ղմտ-ր-ել («գնտ-իր-ել ձևից»)՝ «շատ կլորացնել», գնդի պես դարձնել» նշանակությամբ. «գորով» բառից՝ ղորով-ր-ել («*ղորով-իր-ել ձևից»)՝ «շատ սիրով ու գորովով համոզել»։ «թարախ» բառից՝ րարխ-ր-ել («*րարախ-իր-ել ձևից»)՝ «վերքին կամ պալարին շատ թարախ դոյանալը»... և այլն։ Այս -ր ածանցը բայաձևերի մեջ հաճախ միանում է նաև ուրիշ ածանցներին, ինչպես, օր.¹⁵ -տ ածանցին, և սովորաբար փոխվում է -ն ձևի, այսպես՝ «հանկ-ել» բայից ունենք նանկ-ն-ո-տ-ել, «չոքել» բայից՝ չոկ-ն-ո-տ-ել «շարունակ ծըն-րադրել»... և այլն։

Վերոհիշյալ -ար մասնիկը, օր., սվաներենի սովորական հոգնակի մասնիկներից է, որով անունների եզակի ձևերից հոգնակի ձևեր են կազմվում։

6. յ. -8 հոգնակի մասնիկը հնդեվրոպականները ուզում են հանել «հնդեվրոպական»

-III-ից։

Սա էլ սվաներենում անուններից անցնելով բայերին՝ վերջիններին մեծ ցույց է տալիս սովորաբար օրեկտի հոգնակիությունը, գործողության հաճախակիությունը և սաստկությունը. այսպես, օր.¹ սվան. բայերից լիա՛ն-ն նշանակում է թողնել, մի բան թողնել, իսկ լիա՛ն-ըր-ն (<լիա՛ն-աք-ն ձևից)՝ շատ բան թողնել, սվան. լիզզ-ի նշանակում է ուղարկել, մի բան ուղարկել, իսկ լիզզ-ըր-ն (<լիզզ-աք-ն ձևից)՝ շատ բան ուղարկել կամ շատերին ուղարկել... և այլն²:

Նման եռույթ կա նաև կովկասյան մյուս լեզուներում. Օր.³ արխաղերեն լեզվի տապալներեն բարբառում մարդկանց դասին պատկանող բառերի մեջ հիմնականում հանդես է գալիս -ց(ա) հոգնակի մասնիկը, օր. անշուշտ, նույնն է հյ. -ց և վրց. -ք երբեք հոգնակի մասնիկների հետ⁴ Այսպես նաև՝ արխաղ. ոչ մարդկանց դասին պատկանող առարկաների հոգնակի մասնիկներից է՝ -ֆ(ա), որը նույնն է. անշուշտ, գրբ. -ֆ հոգնակի մասնիկի հետ: Սա նմանապես անուններից անցել է բայերին. ինչպես, օր.⁵ «ձայն» բառի հոգնակին է նկատ՝ ձայն-ֆ. սրից և բարբառներում՝ ձայն-ֆ-նի. այսպես նաև՝ հալո-Ս+ֆ-նի հարց ու փորձ անել, ծեծ-ֆ-նի (կամ՝ ծեծ-կ-նի) շատ ծեծել, ծծ-ֆ-նի շատ ծծել, ճմռ-ֆ-նի (կամ՝ ճմռ-տ-նի)... և այլն:

Անունների հոգնակի մասնիկների և անուններից նրանց անցումների ու բայաձևերի զրոսերումների այսպիսի ընդհանրություններ կովկասյան լեզուների և հայերենի միջև քիչ չեն: Սա ցույց է տալիս այն սերա կապը, որ նախապես եղել է անունների և բայերի, կամ առարկաների կամ նրանց հետ կապված գործողությունների միջև. որոնց մի մասը գեո այսօր էլ պահպանված է հապկապես կովկասյան լեզուների տարբեր բայաձևերում որպես լեզվական հնագույն վերապրուկներ: Այդ վերապրուկներով ոչ պակաս չափով հարուստ է և հայերենը:

Այնուհետև՝ հայոց և վրաց լեզուների երկրորդ հատկանշական կողմնային է, որ նրանց մեջ շատ հաճախ տեղի են ունենում ընդհանուր մասնիկների իմաստային փոխանցումներ. նրանց բովանդակության այն անընդհատ շարժումը, որի ընթացքում հաճախ հոգնակի մասնիկները ընդհանրապես առարկաների հոգնակի գաղափարից անցնում են այլ առարկաների հատկանիշ արտահայտող գաղափարին. և այսպիսով նրանք իրենց մեջ զարգացնելով երկրորդական, հատկանիշ ցույց տվող իմաստը՝ ի վերջո հանգում են իրենց հիմնական-առարկայական իմաստի բացառմանը (մի առարկայի գաղափարից մի այլ առարկայի հատկանիշի գաղափարը ստանալով):

Իչ չեն նման օրինակներ: Հայտնի է, որ հայերենում հոգնակի գաղափարը արտահայտվել է նաև -անի կամ -անն մասնիկներով, ինչպես օր.⁶ «գլուխ» բառի հոգնակին մի ժամանակ եղել է գլխ-անի կամ գլխ-անն «գլուխներ» (հմմտ. գաւրազլիւեան), «գիր» բառից՝ գր-նոց թղթեր, բարեվագիրներ... և այլն:

Այս նույն -անն մասնիկը, որ քարթվելական լեզուների -իան մասնիկի հետ, անշուշտ, նույնն է. սկզբնական հոգնակեւորական գաղափարից

¹ Այս -ուց || -եր պարզ մասնիկը, որ եղել է նաև էտրուկերենում, Հայկական ՍՍԽ ԳԱ ի իսկական անգամ բնկ. Ղափանցյանը համարում է փոքր-տաթական (անս նրա «С происхождением армянского языка», Հայկական ՍՍԽ ԳԱ-ի «Տեղեկագիր» № 7, 1946, էջ 83):

² Օրինակները տես մեր «Անգղերկվասյան լեզուների ազգակցությունը հարկածում, Հայկական ՍՍԽ ԳԱ-ի «Տեղեկագիր» № 7 - 8, 1943:

անցել է երկրորդական բառաստեղծական դադափարին: Այսպես, օր.¹ հյ. փազ-եան ձեր նշանակում է «փողեր» (հողն.), իսկ երկվիռդ-եան (օր. «երկ-փողեան հրացան» արտահայտության մեջ) կամ երկվիռդ-անի=վրց. օրլուլ-իան-ի՝ նշանակում է արդեն «երկու փողեր ունեցող» հատկանիշը: Նույն ձևով նաև հյ. զլիւ-եան կամ զլիւ-անի ձեր նշանակում է «զլուխներ», իսկ եօթզլիւ-եան կամ եօթզլիւ-անի (օր.² «եօթզլխեան կամ եօթզլխանի դե» արտահայտության մեջ) — վրց. շլիդիսալ-իան-ի՝ նշանակում է արդեն «յօթ զլուխ ունեցող» մի բան... և այլն:

Հյ.-եան և վրց.-իան մասնիկները իմաստային անցման հետ միասին նաև իրենց ձևական փոփոխությունն են կատարում, ինչպես «ծաղիկ» բառից՝ ծաղկ-եան, որից, օր.³ ծաղկ-եան փունջ «ծաղիկների փունջ»։ այստեղից էլ նախ ծաղկ-եայ փունջ և ապա՝ ծաղկ-լ. փունջ (-եան > եայ > -լ. փոխանցումով): Այսպես նաև՝ «վարդ» բառից՝ վարդ-եան, որից, օր.⁴ վարդ-եան փունջ, այստեղից էլ՝ նախ վարդ-եայ փունջ և ապա՝ վարդ և փունջ...

և այլն:

Այս հնչյունափոխությունը յուրահատուկ է հայերենին: Նույն -իան մասնիկը վրացերենում ենթարկվել է ուրույն փոփոխության, նախ՝ վերջից կորցրել է «ն» հնչյունը և դարձել -լա և ապա սա էլ, որպես երկրորդադաս. պարզանալով՝ տվել է -ա, ինչպես, օր.⁵ վրց. բալ-իան-ի «զլխեան, զլխանի» դառնում է նախ բալ իալ («ն» հնչյունի անկումով) և ապա՝ բալ ա... և այլն:

Այսպիսով, ուրեմն, միևնույն ժապում ունեցող հյ. -եան և վրց. -բան երբեմնի հոգնակի մասնիկները երկու լեզվում էլ հոգնակի դադափարից անցնելով հատկանիշի դադափարին՝ կատարել են նաև ձևական այնպիսի փոփոխություն, որի հետևանքով նրանք այլևս իրար նման չեն. և հյ. -լ. մասնիկը, որ ծաղում է -եայ, սա էլ -եան ձևից, իրոք որ, նման չէ վրց. -ա մասնիկին, որը նմանապես ծաղում է -լա, սա էլ՝ -բան բնդհանուր ձևից:

Հոգնակի մասնիկները դրսևորվել են նաև մեզ հետաքրքրող երկու լեզվի տեղանունների մեջ, որոնք սովորաբար զույգ են տվել նախ՝ այս կամ այն բանի հոգնակին և ապա՝ այս կամ այն բանով առատ վայրը. տեղանուններ են կազմվել մեծ մասամբ տարրեր բույսերի անուններից, կենդանիների անուններից, թռչունների անուններից, հանքերի անուններից, տարրեր ագլանուններից, ցեղանուններից՝ և այլն:

Այս մասնիկով կազմված որոշ տեղանուններ իր գրքերից մեկում հիշատակել է Հայկական ՍՍԽ ԳԱ-ի իսկական տնօրեն ընկ. Էափանցյանը: Այդ մասնիկով բաղմաթիվ տեղանուններ են գտնվում վրացերենում, որ, ինչպես երևում է, նախապես ունեցել է հոգնակի դադափար: -ա մասնիկի մյուս տարրերակներն են՝ -ա, -բա, -ալ: Սրանցով բաղմաթիվ բառաձևեր են պահպանված թե՛ վրացերենում և թե՛ հայերենում: Երևում է, որ այս մասնիկները ևս, մյուս հոգնակի մասնիկների նման, սովորաբար զույգ են տվել նախ որևէ բանի հոգնակին և ապա՝ այդ բանով առատ վայրը (տեղանունը): Այսպես, օր.⁶ հյ. լեզ-լա=վրց. լեզ ա բառից, որ ծառի մի տեսակն է, պահպանված է հյ. լեզ-ալ-ալ և վրց. լեզ-ալ-ալ-ի ձևերում (որպես տեղանուն-

¹ Մեղանունների կազմված տեղանունների մասին որոշ դիտողություններ ունի պրոֆ. Լ. Դարբիսյանը (ե՛լ լեզվի պատմ. ներած.):

² Երեանի Պետ. Համալսարանի Իրանական աշխատություններ, հատ. XVI, 1946:

ներ), որոնք համազոր են «թեզու» կամ «թեզի» այլ ձևերին: Սա. թնշ-
պես երևում է, ցույց է տվել նախ «թեզի» թեզիներ (ազն.) և ապա
այդ թեզիներով առաջ վայրը (անգանուններ):¹

Իմաստային այս անցումը վերջին հաշվով նույնն է. թնշ որ գոր-
ծիական նույնի ֆունկցիան ընդհանրապես, իմաստի այս անցումը ինչ
հայերենում արդեն լիովին կատարել է առ մասնիկը (իբր մյուս՝ -ել, -իւ, -ով
փոփոխականներով) և դարձրում հանգես է դալիս. արդեն արդեն ձևավորված
գործիական նույնի ձևանիշ: Իմաստի նույն անցումը չի կատարվել. առ-
կայն, վրացերենում. այդ պատճառով էլ -առ ընդհանուր մասնիկով՝ և
սրա՝ -ել, -իւ, -ով փոփոխականներով) այնպեղ տվելի շատ բառաձևեր (թնշ-
պես նաեւ՝ անգանուններ) են պահպանվել սկզբնական նախադասական կամ
հոգնակի իմաստով:

Ն. Մառը դիտարկում է ռեի հյ. -ց և վրց. -ք ընդհանուր մասնիկ-
ների մասին. որոնք հանգես են դալիս հոգնակի սեռական ձևերում. թնշպես.
որ.՝ հյ. խել-ա-ց=վրց. սկաւա-ք ա լիւլիքներէ. հյ. ճա-ց ա=վրց. մա-ք
հերանց, հյ. Մարիամ աւն-ց=վրց. Մարիամա-աւն-ք և այլն.² Այս մասնիկը,
ինչպես երևում է, նախադաս նույնի հետ կապված չի եղել. քանի որ գա-
վրացերենում դեռ այսօր էլ հանգես է դալիս որոշ հոգնակի բայաձևերում
(1-ին և 2-րդ դեմքերում), թնշպես՝ վարթավ-ք բռնում ենք: 1 աք-ալ ք
բռնում ենք, վծեր-ք գրում ենք: 2 սծեր-ք գրում ենք. վալի ք բառում
ենք: 3 սքի-ք բառում ենք և այլն:

Ընդհանուր բառաստեղծական գոյականակերտ մասնիկներից են՝ հյ.
-յուն (հին՝ -իւն) և վրց. -ուն, որոնցով երկու լեզվում էլ գոյական բառեր
են կազմվում. թնշպես՝ բախ- ընդհանուր բառարմատից՝ հյ. բախ-յուն=վրց.
բախ ուն-ի, օախ -բառարմատից՝ հյ. օախ-ուս=սոս. օախ-ուն-ի... և այլն.³

Երկու լեզվի ընդհանուր նույնիներից են, որ.՝ հյ. -ից՝ և վրց. -իք
(=իւիւ. -իւի)՝ երկուսն էլ (նույնը և՛ խեթերենում) բացասականի նույն-
վանիշը, թնշպես, որ.՝ հյ. ֆաղաֆ-ից=վրց. ֆալաֆ-իք բացասականից... և այլն.
և այլն:

Հայոց և վրաց լեզուների ընդհանուր մասնիկները, որոնք մի քանի տառ-
նյակի են հասնում և որոնք քննաթյան ենք ենթարկել մեր Մատթու-
թյան մեջ, մեծ մասամբ կապվում են միամասնակ նախ փոքր-տառական ինչ

¹ Այս -առ մասնիկը անգանունների մեջ ընդ շափանցյանը համարում է
առիական (անս՝ նրա «К происхождению армянского языка», հայկական ՍՍՍՀ ԳԱ.
«Տեղեկագիր», № 7, 1946): Նման -առ -ել -իւ մասնիկները, որ գործիական նույնի էին
գրաբարում, պահպանված են նաև վրացերենում (անս՝ մեր հոգնակի՝ հոգնակական մա-
նիկները հայերենում, հայկական ՍՍՍՀ ԳԱ լեզվագիր, № 7, 1946):

² Ընդգրկողաբանները հյ. այս ընդհանուր մասնիկը ուզում են հանել ներգրա-
մանից (հմմտ. ուսու. -սկնի, գերմ. -sk) -է, սղապրա. -sk, ասւմ -sk և այլն):
Շափանցյանը այս մասնիկը համարում է փոքր-տառական (անս՝ նրա «К происхождению
армянского языка», հայկական ՍՍՍՀ ԳԱ լեզվագիր, № 7, 1946):

³ Հյ. -իւն մասնիկը համարում են ընդգրկողական, բայց գրա համարման -ուն մա-
նիկով վրացերենում հսկայական քանակությամբ բառաձևեր կան. մանկանդ բնավայր
բառարմատներից կազմված:

⁴ Այս ընդհանուր մասնիկը հայկական ՍՍՍՀ ԳԱ իսկական անգամ ընդ. Շափ-
անցյանը համարում է փոքր-տառական (անս՝ նրա «К происхождению армянского языка»)

լեզուների հետ¹ Հայոց լեզվի մի շարք մասնիկները փոքր-ասիական հին լեզուների հետ է կապել Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ ընկ. Ղափանցյանը²։ Մենք այդ մասնիկները միաժամանակ դտնում ենք վրացերենում և քարթվելական մյուս լեզուներում։ Սա ցույց է տալիս, որ հայոց և վրաց լեզուները իրենց կազմավորման պրոցեսում ուժեղ շփումների առերթափանցումների մեջ են հղել փոքր-ասիական հին լեզուների հետ։

Տեսնենք այդ մասնիկներից մի քանիսը։

Ընդհանուր են՝ հյ. -եղ. և վրց. -ել մասնիկները որոշ քառաձևերում, որոնք երկու լեզվում էլ գոյական անուններից (երբեմն էլ՝ բառարմատներից) ածական անուններ են կազմում, ինչպես, օր.՝ հյ. շուկչ=վրց. սուլ ի շոունչ՝ հոդի՝ բառից ունենք հյ. շնչ-եղ և վրց. սուլ-ել-ի՝ իմաստի որոշ տարբերակումով, երկու դեպքում էլ շոունչ ունեցող, վրացերենում՝ շոունչ՝ ողի ունեցող, այն է՝ հիմար՝. այսպես նաև՝ հյ. համեղ, գորեղ, հանճարեղ... և վրց. օֆ ել-ի «հաստ», գրձ-ել-ի «երկար», թխ-ել-ի «բարակ, նոսր, ջրալի», բրտղ-ել ի «տափակ»... և այլն։

Բաղադրյալ մասնիկներից է՝ հյ. -եղ-եմ (<-եղ+եմ<-եղ+եմ), որի առաջին մասն է -եղ (և՛ առանձին գործածական). սրա հին ձևն է -իլ (հնչյունաբանորեն համեմատելով հյ. Նեղոս=ռուս. Нил, հյ. Բարսեղ=ռուս. Василий և այլն, տես Գր. Ղափանցյան, նույն տեղում), որ կա փոքր-ասիական հին լեզուներում՝ խեթերենում, ուրարտերենում և այլն։ Այս մասնիկը -իլ || -իդ ձևով պահպանված է, օր.՝ հայ-վրացական ընդհանուր մի քառաձևում, այն է՝ հյ. իտ-իլ (հմտ. արժատի կրկնությամբ՝ խտ-իտ || խտ-ուտ)=վրց. իուտ-իլ-ի «խուտուտ»։ Այս -իլ մասնիկով բաղկան թվով քառաձևեր կան վրացերենում, ինչպես, օր.՝ ձախ-իլ-ի «կանչ», զիւ-իլ-ի «ժպիտ», տի-իլ-ի «տապ, տաք», ծեր-իլ-ի «դրած, նամակ»... և այլն։

Բաղադրյալ մասնիկներից է նմանապես հյ. արեմ=-երեմ (<ար+եմ || -եր+եմ<-ար+եմ || -եր+եմ)³, որոնցից, եթե երկրորդ ընդհանուր -եմ (<-եմ) մասնիկը դեն գցենք, կմնան -ար || -եր առաջին մասերը, որոնք ծագում ցույց տվող փոքր-ասիական հին քարացած մասնիկներից են (նման ռուս. -ский կամ -скн)։ Այս -ար մասնիկը կա նաև մեգրելերենում, ինչպես, օր.՝ սոմխիթ-ար-ի «հայաստանցի, հայ» օղիշ-ար-ի «օղիշեցի», օպլիզ-ար-ի «օպլիզեցի»... և այլն, որի ձևաիմաստային համարժեքն է վրց. -ել, օր.՝ ֆալաֆ-ել-ի «քաղաքացի», գոր ել-ի «դրեցի»... և այլն։ Եղիլ է նաև խեթ., -illi, օր.՝ hattili (=նախախեթ. hatteri) «խեթերեն», hurilli «խուտիտերեն» || uilli «լուվիտերեն»... և այլն։

-իմ || -ում բառաստեղծական մասնիկը, որ շատ տարածված է հայերենում (օր.՝ կավ-իմ, լու-իմ, խառն-իմ «մանր մարախ», ուտ-իմ «ճճի կրծող», կորկոտ-իմ «մանրունք»... կճ-ում, պարկ-ում, բրդ-ում և այլն), խեթ-թերենում և ուրարտերենում, ես դտնում եմ նաև վրացերենում (-ում ||

¹ Երբեմն էլ նաև «նեղերոպական» կոչված մասնիկների հետ, որոնց կապը, իմ կարծիքով, խիստ կասկածի տակ է։

² Տես նաև «К происхожд. армян. яз.», Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», № 7, 1946.

³ Այս մասին տես մեր «Հնչյունաբանական մի քանի յուրահատուկ դրսեվորումներ հայոց և վրաց լեզուներում» հոդվածը (Հայկական ՍՍՌ ԳԱ-ի «Տեղեկագիր», № 11-12, 1946).

⁴ Տես նույն տեղում.

․իմ || -ուն), օր․՝ վրց․ կահ-ան-ի(|| կահ-աի-ի «չոր շամբ», որից և կահ-աի-ուն-ի «շամբուտ»․ բառարմատն է՝ կահ-, որից՝ արմատի կրկնությամբ՝ կահ-կահ-ա լուրիս «լորու մի տեսակը»․ գորգու-ան-ի «անիվիկ»․ փի-ան-ի «հյուսնի գործիք»․ նույ-ան-ի «խիստ թրջված՝ հարբած»... դորգու-ին-ելա «ընկույզի ամբողջական միջուկը»․ խոն-ին-ի «ծծկեր երեխա պառկեցնելու անիմների վրա ամրացրած տախտակ»... զլեխ-ուն-ա «(ծաղրաբար) գյուղացիկ»՝ զլեխ-ի «գյուղացի» բառից․ կուկր-ուն-ան-ա «ընկույզի միջուկ»․ տղ-աա-ուն-ի <*տղ'ավ-սւն-ի «քուրք»․ տղ-ուն-ի || տղ'-ույ-ի «ջուխտակ»․ կուն-ուն-ա «մի տեսակ բույս է»․ գոգր-ուն-ա «դղումիկ, փոքրիկ դղում»՝ գոգր-ա «դղում» բառից․ թափի-ուն-ա «մեղրաջրով պատրաստված խմորեղեն»՝ թափի «մեղր» բառից․ կակի-ուն-ա «ընկույզիկ, պնդուկ»՝ կակալ-ի «ընկույզ» բառից... և այլն։

․իթ>-յթ մասնիկը հանդես է դալիս հայոց և վրաց լեզուների անուններում, հայերենում՝ գոյական անուններում, իսկ վրացերենում՝ ածական անուններում [միևնույն մասնիկի գոյական և ածական անուններում հանդես դալը սովորական է և՛ հայերենում, ինչպես, օր․՝ կրակ-անի նշանակում է նախ «կրակներ» և ապա «կրակ ունեցող»]։ Այս ընդհանուր մասնիկով (-յթ) հայերենում ունենք բավական թվով գոյական անուններ․ այսպես, օր․՝ բուն→*բնո→բնո-յթ, հաս→*հասո→հասո-յթ, ձև→ձեւիւ→ձեւիւ-յթ... և այլն (սովորաբար անուններից կամ բայարմատներից նոր անուններ կազմելով)։ Սրա վրց․ համարժեքով՝ իթ մասնիկով բավական թվով անուններ կան վրացերենում․ այսպես, օր․՝ ֆվե «հեա» բառից կա ֆվե-իթ-ի «հետեվակ», զե «վրա» բառից՝ զե-վ իթ-ի «վերեի», միցեմ-ա «տալ» բառից՝ միցեմ-իթ-ի «տրվի, տրական», դադեթ-աւ բառից՝ դադեթ-իթ-ի «դրվի, դրական»... և այլն։

Բայարմատներից ածական կազմող -ուր մասնիկը, որ հայերեն մի քանի բառաձևերում (օր․՝ թափ-եմ բայից՝ թափ-ուր, լեւ-ում բայից՝ լեւ-ուր-ի...) դիտել է ընկ․ Ղափանցյանը («К происх. армян. яз.») և համեմատել է ուրարտերեն -ur մասնիկի հետ (օր․՝ ust-ur.i «եկած» և այլն), համարելով փոքրասիական, իմ կարծիքով, կա նաև վրացերենում՝ -ուլ (ր→լ դիսիմիլացիայով, որ սովորական է տեղական լեզուներում)՝ բայարմատներից կամ բայահիմքերից նմանապես ածական անուններ կազմելով, ինչպես, օր․՝ գասուֆեթ-ա «չաղանալ»→գասուֆեթ ուլ-ի «չաղացած», նախ-վա «տեսնել»→նախ-ուլ-ի «տեսած», գալեթեթ-ա «շինել»→գալեթեթ-ուլ-ի «շինած», դախուր-ւլա «ծածկել»→դախուր-ուլ-ի «ծածկած»... և այլն։

Հյ․ -ն+ի || -ան+ի հոգնակի մասնիկը (օր․՝ կրակ-անի «կրակներ», շոր-նի «շորեր»... տեղանուններից՝ Պտղ-նի, Արդ-նի, և այլն, որ համարվում է փոքր-ասիական, կա նաև վրացերենում՝ -ն ձևով․ օր․՝ կաց-ն-ի «մարդիկ», հսե-ն ի «սրանք», իգի-ն-ի «ներանք» և այլն։ Այս նույն մասնիկը հայոց և վրաց լեզուներում հոգնակերտական գաղափարից, այս կամ այն չափով, անցել է բառաստեղծական դադափարին․ այսպես, օր․՝ հյ․ կրակ-անի նշանակում է նախ «կրակներ» (հոգն․) և ապա՝ «կրակ ունեցող», կամ թե չէ՝ Պտղ-նի տեղանունը նախ նշանակել է «պտուղներ» և ապա՝ այն տեղը, որտեղ շատ պտուղներ կան։ Այսպես նաև՝ վրց․ թալ-ի «գլուխ» բառից՝ թալ-Ս-ի նախ «գլուխներ» (հոգն․) է նշանակել և ապա «դրամագլուխ», մարխվա «պահել» բառից՝ մարխվա-ն-ի «պահք», լոցվա «աղոթել» բառից՝ լոցվա-ն-ի

«աղոթք», կուրթխելա «օրհնել» բառից՝ կուրթխելա-ն-ի «օրհնանք», դեղա «մայր» բառից՝ դեղա-ն-ի նախ «մայրեր» և ապա «մայր զիր, բնագիր», ինչպես նաև տեղանուններից՝ րլա-ն ը «կաղնիք» և այլն:

Իմաստային անցումների շնորհիվ է, որ առանձին անկախ բառերը, այս կամ այն չափով, կորցնելով իրենց ինքնուրույնությունը, աստիճանաբար դառնում են նախ օժանդակ (=սպասարկու) բառեր և ապա՝ մասնիկներ ու ածանցներ:

Ձևաիմաստային այս կարգի անցումները քիչ չեն, որոնք ցույց են տալիս ու հիմնավորում իմ մենագրության մեջ և որոնք տեղի են ունեցել լեզվի զարգացման բոլոր փուլերում՝ սկսած մարգկային մտածողության և դրա դրսևորման հենց սկզբնական շրջաններից. առանց այդ անցումների շարժում, մտածողություն, լեզու չէր լինի:

Այստեղ դժվար է ամեն ինչ հիշատակել. մեզ հետաքրքրող լեզուների ընդհանրություններն այնքան շատ են ու բազմազան, որ կարելի է բազմաթիվ նոր օրինակներ բերել, բայց այսքանն էլ բավական է համոզվելու, որ հայոց և վրաց լեզուները, որպես անդրկովկասյան լեզուներից ամենաուրույն լեզուներ, իրենց առանձնահատկությունների հետ միասին, ունեն նաև բազմաթիվ ընդհանուր տարրեր, որոնց թիվը հասնում է մի քանի հազարի: Այդ ընդհանրությունները առաջ են եկել տեղական հողի վրա:

Բազմաթիվ փաստերից պարզ երևում է, որ հայոց և վրաց լեզուները վաղադույն շրջաններում ալրել են ամենամոտ շփումների, բնական ներթափանցումների ու խաչավորումների ուժեղ պրոցես, այլապես այդ բոլորը նույնիսկ դժվար է պատկերացնել:

Այս կարգի ընդհանրությունները, նախ և առաջ, կապվում են այն շրջանի հետ, երբ հայերի կազմավորմանը Փոքր-Հայքում մասնակից լինելով Հայաստանի ոչ հնդեվրոպական բնակիչները՝ խուրրիները կամ սուբարիները և այլն (որոնք ըստ Ն. Մառի հարեթական ցեղեր են և ազգակից են հին կովկասյան ցեղերին), ինչպես նաև՝ տեղում ապրող մեծ մասամբ քարթվելական ծագում ունեցող մի շարք այլ ցեղեր՝ մոսոխներ կամ մեսխեր, մակրոններ (ճաններ), խաղտիներ կամ խալիբներ,¹ կոլխեր և այլն՝ էթնիկական ու լեզվական ներթափանցումների ու խաչավորումների ուղիով առաջ է գալիս արդեն մի նոր որակի էթնոս մի կողմից՝ հայ ժողովուրդը և մյուս կողմից՝ վրաց ժողովուրդը: Այնուհետև՝ այն ժամանակվա հայերի հետագա տարածումը հյուսիս-արևելք և լեզվական նորանոր փոխադարձ ներթափանցումներն ու խաչավորումները է՛լ ավելի նպաստում են հայ-վրացական լեզվական ընդհանուր տարրերի աճմանը:

Այդ ընդհանրություններն այնքան շատ են հայոց և վրաց լեզուներում, որ նախատեսվում է, անշուշտ, երկու լեզվի փոխադարձ շփումների, ներթափանցումների ու խաչավորումների երկար ընթացք և տարբեր կըրկունումներ: Այդ ընդհանրությունները դրսևորված են երկու լեզվի ընդհանուր մասնիկներով և բառերով ու բառարմատներով:

¹ Խաղ-տի կամ խալ-լի բառերի արմատը՝ խալ կամ խալ պեաք է լինի (որից է՝ խալդ). հնդեակի մասնիկներ են՝ -տի (օր՝ ծակ-տի «ծակեր») և -իք (կամ՝ -եր, որ պահպանված է վրացերենում, որ՝ Կուր-ի հացա բառից սլուք-եր-ի «հացեր») և այլն. Խալիք ցեղանունից, ըստ երևույթին, սաացված է վրաց. Կալիք-ի «կաղապար» բառը:

Ահա այս կարգի ընդհանրությունները բնական է, որ «փոխառություններ» չեն կարող լինել: Այդ է պատճառը, որ այս ընդհանրությունները փոխառությամբ բացատրող գիտնականները հաճախ իրար հակաժեռ կարծիք են արտահայտում մի շարք ընդհանուր բառերի նկատմամբ:¹

Այսպիսի հակասություններ միշտ էլ սպասելի են ու կլինեն անշուշտ, եթե մենք աշխատենք հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները, մանավանդ հնագույն ընդհանրությունները, բացատրել ինչ-որ «փոխառությունների» միջոցով, և անտեսենք հայոց և վրաց լեզուների այն ազդակցությունը, որ ստեղծվել է նրանց միջև վաղագույն շրջաններում, նրանց կաղավորման պրոցեսում, ե որը յուրահատուկ կրթությունը իր գործունեության սկզբից մինչև վերջը առաջ էր քաշում ու պաշտպանում ն. Մառը:

Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունների համեմատական ուսումնասիրությունը շատ կարևոր է նաև, վերջապես, զուտ հայոց լեզվի պատմության ուսումնասիրության տեսակետից: Հայոց մի շարք մասնիկներն ու բառարմատները, որ, իրոք, տեղական (հաբեթական) ծագում ունեն, կարող ենք ճիշտ կերպով վերծանել միայն հաբեթական լեզուների, մասնավորապես նրանց ժառանգորդ քարթվելական լեզուների ընդհանուր տարրերի հետ համադրելով, առանց որի նրանց ստուգաբանությունը կամ բոլորովին հնարավոր չէ, կամ էլ ճիշտ չի լինի:

¹ Այսպես, օր.² Հ. Աճառյանի «Կարծիքով» լուծծ, խոց-խոցել, կալ, ցեխ-ցեխել և այլն հայերենից են փոխառյալ վրացերենում, մինչդեռ Նորվեգիացի հայանի արեելագետ-լեզվաբան H. Vogt-ը, ընդհակառակը, այս նույն բառերը համարում է վրացերենից փոխառյալ հայերենի մեջ: